Funded by the European Union

# Ո՛չ բռնությանը!

**ԲՌՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԱՑԱԾ Ձև ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ Է, ՈՐԸ ԽԱԽՏՈՒՄ Է ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ և ՍՊԱՌՆԱԼԻՔ Է ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԱՆՁԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ և ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆԸ:**

Եթե կարծում եք, որ ձեզ կամ ինչ-որ մեկի նկատմամբ բռնություն է ենթարկվում, կարող եք կապ հաստատել. Վրաստանի Ներքին գործերի նախարարություն **112**



Ընտանեկան բռնության թեժ գիծ **116 006**

Եթե գործակալությունների կողմից, ժամանակին և պատշաճ կերպով չեն արձագանքվում, կարող եք դիմել Վրաստանի Ժողովրդական պաշտպանին **14 81**

# Ի՞ՆՉ Է ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ

**Ֆիզիկական բռնություն** - հարվածել, ծեծել, մազ քաշել, առողջությանը վնաս հասցնել կամ որևէ այլ գործողություն, որը պատճառում է ֆիզիկական ցավ կամ տառապանք:

**Հոգեբանական բռնություն** - բանավոր վիրավորանքներ, հայհոյանքներ, անընդհատ քննադատություն, նսեմացնող արտահայտությունների կիրառում կամ այլ գործողություններ, որոնք ոտնահարում են անձի պատիվն ու արժանապատվությունը:

**Սեռական բռնություն** - անձի (ներառյալ ամուսնու կողմից) կողմից բռնությամբ կամ բռնության սպառնալիքներ ներքո, զոհի անօգնական վիճակից օգտվելով, սեռական հարաբերություն ունենալը կամ որևէ տեսակի սեռական գործունեություն ծավալելը:

**Տնտեսական բռնություն** - երբ ամուսինը/զուգընկերը կամ ընտանիքի այլ անդամը արգելում է անձին աշխատել: Վերահսկում է նրա եկամուտը, սահմանափակում է տանը, սննդի կամ կենցաղային իրերի հասանելիությունը:

**Հարկադրանք/ստիպում** - անձին արգելել շփվել իր հարազատների հետ, կամ ցանկացած գործողություն կատարել, որով անձը ձեռնպահ է մնում այլ գործողություններից իր կամքին հակառակ:

**Հետապնդում** - անձի կամքին հակառակ նրա հետ հաղորդակցության հաստատում՝ սոցիալական ցանցերի կամ այլ միջոցներով, հետապնդում, բնակության կամ աշխատանքի վայր այցելելը, որը հանգեցնում է կենսակերպի էական փոփոխության:

**Վերոնշյալ բռնության ձևերը կարող են իրականացվել ինչպես դեմ առ դեմ, այնպես էլ սոցիալական ցանցերի կամ այլ թվային ալիքների միջոցով:**

**Հասարակության ոչ մի անդամ չպետք է հանդուրժի իր կամ որևէ մեկ ուրիշի նկատմամբ բռնությունը:**

Այսհրատարակությունը ստեղծված է Եվրամիությանաջակցությամբ: Դրա բովանդակության վրաամբողջությամբ պատասխանատու էԺողովրդական պաշտպանի գրասենյակը ևհնարավոր է այն չի արտահայտում Եվրամիությանտեսակետը